

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

«Գլխավորեալ այսօր է ընդ զիմանալին փարթաւ մեծութիւն. որ սլացեալ հասեր է բարձունս երկնից. իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման մարմին, յորմէ պատկանեաց ամօթով պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ Տեառնդ կենակից, սուրբդ Տիրամայր. արգահատեալ միշտ զոգորմութիւն որոց պանդխտիմք է վեհա ներքին».

(Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ)

Ս. ԿՈՒՍԻՆ ԱՌԱՋՆԱՇՆՈՐՀՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եկեղեցւոյ և բոլոր ժողովուրդին խանդավառութիւնն անսահման է և սպասումը անձկագին. արեւելքէն բազմաթիւ եպիսկոպոսներ հաւաքուած են ներկայ ըլլալու տիեզերական համաժողովին:

Ու ահա, հասած է օրը: Ս. Աստուածածնի տաճարը լի է ժողովականներով. բազմած են հայրապետները ու խիզախօրէն կը ճառեն հաւատքի հարցերու մասին: Փակ են դռները, բայց երբեմն երբեմն՝ մոռնող ալիքներու նման՝ անոնց ականջին կը հասնի հաւատացեալներու աղաղակը. դուրսը գովեստի անգուսպ ուղերձներ կը պայթին. Աստուածածնին, Կեցցէ՛ Տիրաւայրը...:

Գիշերն յառաջացած է արդէն, երբ յանկարծ տաճարին դռները կը բացուին և հրապարակի վրայ կը կարդացուի ահաւոր վճիռը. Նիստորի դատապարտութիւնը:

Կը դղրդայ ամբողջ Եփեսոս ցնծութեան գոռում-գոչումով և ծափերով. բազմուածութիւնը կը խոնորի երկու հարիւր եպիսկոպոսներուն շուրջ, ջահերով ու բուրվառներով թափօր կազմած՝ ուսամբարձ կ'առաջնորդէ զանոնք իրենց բնակարանները:

Այսպէս կը նկարագրէ Ս. Կիրեղ այն

դէպքերը, որ տեղի ունեցան 431-ի Յունիս 22-ին¹:

Միեւնոյն տեսարանը չէր պատկերաւոր արդեօք մեր մտքին առջեւ ալ, երբ անցեալ օրերը, Նոյեմբեր 1-ին՝ կը հետեւէին (թերեւս ճայնասփիւռով) այն մեծ եղելութեան, այն աննախընթաց փառքին ու հանդէսին, որուն առարկան էր դարձեալ Տիրամայրը: Այն օրը, շուրջ մէկ միլիոն ժողովուրդի ներկայութեան, վեց հարիւրէ աւելի եպիսկոպոսներ, եկեղեցական հովիւներ, հաւաքուած Սրբ. Քահանայապետին շուրջ, անսահման խանդավառութեամբ հաստատեցին Ս. Աստուածածնի վերափոխման հրամանակարգ վարդապետութիւնը. բովանդակ ըրիստոնէութիւնը, աշխարհի չորս ծագերէն ուշի ուշով կը հետեւէր, կ'աղօթէր, կը հաւատար:

Ս. Աստուածածնի առանձնաշնորհութիւններէն՝ ամէնէն առաջ «աստուածամայրութիւնը» հռչակուած է հաւատքի հրամանակարգ վարդապետութիւն, Եփեսոսի Ս. Ժողովով. յաջորդաբար Տիրամօր

(1) Հմտ. Hefele, Histoire des Conciles T. II, 2e Partie, pg. 312. Paris, 1908.

«անխախտ և մշտնջենաւոր կուսութիւնը» և «Անարատ Յղութիւնը Աննայէն»՝ ըրիստոնէական դաւանանքի մաս հրատարակուած են: Նոյեմբեր 1-ի վճռով՝ չորրորդ առանձնաշնորհութիւն մ'ալ հրամանակարգ վարդապետութիւն հռչակուեցաւ, Տիրամօր վերափոխումը, որ սերտօրէն կապուած է նախորդ երեքին հետ, մանաւանդ թէ՛ անոնց լրումն է և պսակումը:

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աստեղագէտները նորանոր աստղեր չեն ստեղծեր, երբ երեւան կը հանեն կամ կ'ապացուցանեն աստղի մը գոյութիւնը, որ մինչեւ այն ատեն անձանթ մնացած էր. բնագէտներն ու տարրաբանները եկեղեցական կամ հիւլէական ոյժեր չեն ստեղծեր, երբ կը յաջողին զանոնք երեւան հանել երկարատեւ պրպտումներէ վերջ: Այսպէս ալ, Քրիստոսի Եկեղեցին՝ հաւատքի առարկայ ճշմարտութիւն մը սահմանելով, չի՛ ստեղծեր նոր դաւանանք մը, այլ՝ հաւատացեալներուն բացայայտ կերպով կը ծանուցանէ այն՝ ինչ որ զօրեւոր կերպով կը գտնուէր Աստուծոյ կողմէ մաց կերպով կը գտնուէր Սասունի խորունկ և արգաւանդ ախօսներուն մէջ:

Ս. Եկեղեցին դարերէ ի վեր իր սրբազան աւանդութեան մէջ ընդունած էր Ս. Աստուածածնի վերափոխումը. Տիրամօր ննջման տօնը և վերափոխումը՝ որոշակի Զ. դարուն իսկ կը յիշատակուին Բիւզանդիոնի մէջ. բիւզ վերջ Երուսաղէմ, Հռոմ, Միլան, Սպանիա, Ֆրանսա. նոյն շրջանին պէտք է որ Հայաստանի մէջ եւս գոյութիւն ունեցած ըլլայ, թէեւ կը պակսին այս մասին զիտական ստույգ եզրակացութիւններ: Անուրանալի է սակայն որ վերափոխումը Հայ եկեղեցւոյ մեծագոյն տօնեփոխումը Հայ եկեղեցւոյ մեծագոյն տօնէրէն մին եղած է հին ժամանակներէ ի վեր:

Տիեզերական եկեղեցւոյ այս լուռ հաւատքն է որ Նոյեմբեր 1-ի վճռով ծաղկած է ու բացայայտ կերպով հաստատուած:

Ի՞նչպէս Ս. Եկեղեցին հասաւ այս հրամանակարգ վճիռին:

Ամբողջ դարու մը պատմութիւնը միայն կրնայ բացատրել այս խորհուրդը, ինչ որ պիտի ընենք հակիրճ խօսքերով:

1854-ի Դեկտ. 8-ին «Անարատ Յղութիւնը» հրամանակարգ վարդապետութիւն հռչակուեցաւ. այդ օրէն վերջ, կարծէք ֆիզիքական – հոգեբանական օրէնքի մը համաձայն՝ եպիսկոպոսներու և աստուածաբաններու մէջ հարցը կը ծագի՝ թէ արդեօք կարելի չէ՞ վերափոխումն ալ նոյնպէս հռչակել:

Ասով կը սկսի շարժում մը, զոր «movimento assunzionistico» կը կոչեն, և որ ամբողջ 100 տարի կը տեւէ: Կ'ունենայ իր ելեւէջները, սակայն միշտ աստիճանաբար աճումով. հուսկ կը հասնի տիեզերական յորդահոսան ծաւալի մը, որուն նմանը չէ պատահած Եկեղեցւոյ պատմութեան մէջ: Կը տարածուի թեմէ թեմ, երկրէ երկիր, և երկրագունդին ամէնէն հեռուոր անկիւններէն անգամ խնդրագիրներ կ'ուղղուին Հռոմի Սրբ. Քահանայապետին՝ ի նպաստ վերափոխման հրատարակութեան:

Քարդուլիւններ, աղօթքներ, համաժողովներ, թեմական, նահանգային և ազգային եկեղեցական սիւնհոդոսներ կը նպաստեն այս շարժումին. ժողովրդական քուէարկութիւններ կը կազմակերպուին ամէն կողմ, կը բազմանան խնդրանքները:

Բանապաշտ և արդիապաշտ հոսանքները չեն կրնար խեղդել այս շարժումը, որ օրէ օր կը ծաւալի ու տիեզերական կոչ մը կը դառնայ:

Սրբազան Քահանայապետներու յանձնարարութեամբ աստուածաբանները գործի կ'անցնին. կը քննեն հարցը արմատով, հասարակաց վիճաբանութիւններ կը սարքուին, ուսումնասիրութիւններ կը տարակուին, թեր ու դէմ կարծիքներ հրապարակ կը դրուին, արեւելեան եկեղեցիներու ծիսարանները կ'ուսումնասիր-

բուհին լրջօրէն, հայրախօսական պրպտումներ կը կատարուին մեծամեծ աստուածաբաններու կողմէ:

Ն. Ս. Պիոս ԺԲ.-ի յանձնարարութեամբ, 1945-ին P. Wilhelm Hentrich S. J., քննական երկար ուսումնասիրութիւններէ վերջ կը հրատարակէ Ս. Աթոռին ուղղուած բոլոր խնդրանքները (մինչեւ 1940), երկու աստուար հատորներու մէջ²: Երկրորդ հատորին մէջ, բոլոր խնդրանքներու համադրութիւնը կը կատարէ, և հուսկ կը դնէ ժամանակագրական, պատմական, վիճակագրական ցուցակներ, երկիրներու, ազգերու, ծէսերու բաժանումներով:

Այդ ցուցակներէն երեւան կ'ելլէ, որ մինչեւ 1940 թուականը Ս. Աթոռին ուղղուած են 2505 աղերսագիր՝ կարգիւնաւորու, պատրիարքներու, արքեպիսկոպոսներու և եպիսկոպոսներու կողմէ. 83.000 խնդրագիր՝ հոգեւորականներու կողմէ, ըլլան անոնք վարդապետ կամ մայրապետ. իսկ հաւատացեալներու կողմէ՝ աւելի քան ութը միլիոն:

Հայ կաթողիկէ եկեղեցւոյ կողմէ՝ ընդամենը 25 խնդրագիր ներկայացուած է (1870-1940). կաթողիկոս-Պատրիարքներէն՝ Հասուն, Թերզեան, Արփարեան, Եպիսկոպոսներէն՝ Ռոբոսեան, Նազլեան, Քեքելիքեան, Չէլչեան, Պահապանեան, Մեղիսեան, Իսրայէլեան, Թէոդորովիչ, Արեւեան, Յիւսէ. Կիւրեղեան: Ուրեմն նուիրապետութեան 80%ը:

Հ. Հենդրիխի հրատարակութեան վերջ՝ բոլոր աստուածաբաններն ալ խոստովանած են թէ այդ աղերսագրերուն մէջ յայտնուած է Եկեղեցւոյ ուսուցումը Ս. Աստուածածնի վերաբերման մասին:

1940-1945-ի շրջանին կը շարունա-

կուին դիմումները դէպի Ս. Աթոռ. 852 բարձրաստիճան եկեղեցականներ, 63 կղերական կարգեր և 79 Միաբանութիւններ՝ իրենց 222,000 կրօնաւորներով, 200 Համալսարաններ և կղերանոցներ. հաւատացեալներու կողմէ եղած խնդրանքները՝ քանի մը միլիոնի կը հասնին:

Մեծագոյն եղեւթիւնը կը սկսի 1946-ի Մայիս 1-ով:

Այդ օրը՝ Սրբգ. Քահանայապետը, Ն. Ս. Պիոս ԺԲ. շրջաբերական մը կը հրատարակէ («Deiparæ Virginis»), ուղղուած աշխարհի բոլոր եպիսկոպոսներուն, որոնք խորապէս քննելով ու խորհելով Տիրամօր վերաբերման խորհուրդի մասին՝ պարտական էին պատասխանելու թէ արդեօք կարելի՞ էր և յարմար էր զայն հրամանակարգ վարդապետութիւն հրատարակել:

Խանդավառ են այն պատասխանները որոնք ամէն կողմէ հասան ու հիմա կը պահուին առանձին դիւանի մը մէջ:

Դրական պատասխան տուած են 1191 կարդինալներ, պատրիարքներ, թեմական եպիսկոպոսներ, 16 եպիսկոպոսներ միայն դժուարութիւն հանած են սահմանումին պատշաճութեան մասին, անյարմար նկատելով ներկայ ժամանակը. ուրիշ 6 եպիսկոպոսներ կասկած յայտնած են սահմանումին կարելիութեան շուրջ ալ. ասոնք սակայն 1,8% մասը կը կազմեն ընդհանրութեան և պատճառները զոր կը յիշատակեն չեն ներկայացնել ծանր և անլուծելի հանգամանքներ, աւելի քաղաքագիտական երեւոյթ ունին:

98,2% մեծամասնութեան կը մասնակցին բազմաթիւ ուրիշ եկեղեցականներ. յատկապէս յիշատակուելու են ա-

բեւեւեան 17 եկեղեցիները, որ Ս. Գահին հետ միացած են. ամէնքն ալ (54 Պատրիարքներ ու թեմական եպիսկոպոսներ) զրական պատասխանած են³:

Խնդրագիրներուն մէջ եպիսկոպոսները յաճախ մատնանշած են նաեւ հռչակուելիք դաւանանքին սահմանը. քիչ բացառութեամբ, անոնք կ'ընդունին թէ Ս. Աստուածածին իսկապէս մեռած է, սակայն տուածածին իսկապէս սահմանուել կը խնդրեն որ այդ՝ հաւատքի սահմանուելին մէջ չմտնէ, այլ հրատարակուելի միայն Ս. Աստուածածնի հոգեով ու մարմնով երկնքի փառաւորութեան մէջ զբաղուելու: Նմանապէս յաճախ խնդրանքներուն մէջ կը յարեն աստուածաբանական, հայրախօսական փաստեր և բացարձակ մեծամասնութեամբ զայն կը նկատեն իբր յաստուածուստ յայտնեալ ճշմարտութիւն:

Սրբազան Քահանայապետը այս բոլորը քննելէն վերջ, կ'որոշէ յայտարարել զայն իբր հրամանակարգ վարդապետութիւն:

Մեր ազգային թերթերէն ոմանք իսկոյն արձագանգ տուին այս որոշումին. խանդավառութեամբ զրեցին Մասիս և Աւետիք՝ կաթ. Պատրիարքարանի թերթերը:

Կարեկցութեան արժանի էր այն յօդուածը որ լոյս տեսաւ «Յառաջ» օրագրին մէջ, Օգոստ. 23-ին (էջ 3), Տ. ստորագրութեամբ. մոլեռանդ մտայնութեան արդիւնք և ծայրէ ծայր տգիտութեամբ ընցուն. բողոքական ազգեցութեան տակ զրուածք մըն էր, բոլորովին անտեղեակ աստուածաբանական հարցերու:

Նմանապէս մեր հարցին ու պատմութեան անտեղեակ կ'երեւէր այն Եկեղեցւոյն, որ «Արև» օրաթերթի Հոկտ. 10-ի թիւին մէջ (էջ 2) գրած էր «Վատիկանի մէկ նոր ելոյթը» վերնագրով:

Ուրախ ենք սակայն, որ իսկոյն, լուսամիտ Քրիստոնէական մը պատասխան տուաւ նոյն օրաթերթին Հոկտ. 13-ի թիւին մէջ (էջ 2), վկայ կոչելով Հայ եկեղեցւոյ դարաւոր ծէսն ու դաւանանքը: Դարձեալ միեւնոյն օրաթերթին մէջ ուսումնասէր մը, Ս. Պ. ստորագրութեամբ, Մեկտոնի վերագրուած «Ս. Կուսին փոխման ճառին հայերէն աշխարհաբար թարգմանութիւնը հրատարակեց (Հոկտ. 28 և յԵ.). շնորհաւորելի է:

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԴԱՆԱՆԱՅԻՐ

Հասաւ Նոյեմբեր 1-ը, ու տեղի ունեցաւ դարուս կրօնական ամէնէն մեծ եղելութիւնը, Ս. Պետրոսի հսկայ հրապարակին մէջ: Սրբազան Քահանայապետը՝ Ն. Ս. Պիոս ԺԲ. հանդիսապէս հրատարակեց վերաբերման հրամանակարգ վարդապետութիւնը. ստորագրեցին՝ 39 կարդինալներ, 7 Պատրիարքներ, 160 Արքեպիսկոպոսներ, 431 եպիսկոպոսներ, որոնք ներկայ էին հանդիսին⁴: Մեր հայ կաթ. Նուիրապետութեան կը մասնակցէին, Վսեմ. Գերբը. Գրիգոր Պետրոս ԺԵ. Ա. դաճանեան՝ Կաթ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ, Գերպ. Գերպ. Արք. Արք. Յակոբ Նեսիմեան (Աղեքսանդրիայէն), Գրիգոր Հինտիէ (Հալէպէն), Պօղոս Քիրէճեան (Պոլսէն), Պետրոս Քէտիճեան (տիտղ. կողմից), Ներսէս Թայրոյեան (Պաղատաւէն), և Կիւրեղ Յովհ. Եպիսկ. Զօհրապեան (տիտղ. Քիլիսոյ): Արարողութեան կը մասնակցէին անհամար հոգեւորականներ. կղերական հաստատութիւններու, Համալսարաններու ներկայացուցիչներ և դիւանագիտական մարմնի բարձրաստիճան

(2) Petitiones de Assumptione corporea B. V. Mariæ in cælum definienda ad S. Sædem delatæ, propositæ secundum ordinem hierarchicum, dogmaticum, geographicum, ad consensum Ec-

clesiæ manifestandum. Typ. Pol. Vaticanis, 1942, vol. I-II, pg. 1051 + 1110. Գրքին հրատարակութեան օժանդակած է P. Rudolf Gueltner de Moos.

(3) Այս մանրամասնութիւններուն համար տե՛ս Wilhelm Hentrich-ի «Alla vigilia della definizione dogmatica dell'Assunzione corporea di Maria

Santissima.». «L' Osservatore Romano», 1950, Agosto 16-17, pg. 1.

(4) Բոլոր ներկաներուն համագումար ցուցակ տե՛ս ի «L'Osservatore Romano», 1950, Dic. 4-5, pg. 3-4.

բազմավէպի անձեր, անթիւ հաւատացեալներ:

* * *

Աստուածաբանական, վարդապետական կոնդակը զոր այդ օրը հրատարակեց Սրբգ. Փահլանյանը՝ դաւանական գոհար մըն է, ուր կը ներկայացուի Տիրամօր վերափոխման բովանդակ խորհուրդը՝ պատմական, ծիսական, հայրախօսական և տեսական խոր վերլուծումով:

Ահա էական կէտերը.

1. Եպիսկոպոսներու միաձայն հաւանութիւնը ցոյց կու տայ թէ Եկեղեցւոյ մէջ կայ հաւատքը՝ Տիրամօր հոգւով ու մարմնով երկինք փոխադրուելուն և փառաւորուելուն. արդ, այս հաւատքը չի կրնար մարդկային գիտութեամբ ստացուիլ, վասնզի կուսական մարմինն ստացած երկնային փառաւորութիւնը՝ մարդկային մտքի ոչ մէկ բնական կարողութեամբ կարելի չէ ճանչնալ. ուրեմն այդ հաւատքը կը ծագի գերբնական աղբիւրէ մը, աստուածային յայտնութենէ մը:

Եթէ այսօր կայ այդ հաւատքը, միեւնոյնը կար նաեւ Քրիստոնէութեան սկիզբը, վասնզի Եկեղեցւոյ ուսուցիչը Ս. Հոգին է, անսխալ. Ս. Պետրոսի յաջորդներն ալ՝ նոր դաւանանքներ հրատարակելու համար չեն առած Ս. Հոգին, այլ՝ առաքեալներէն աւանդուած ճշմարտութիւնը պահպանելու, բացատրելու, հրատարակելու համար:

2. Այս դրական նախաբանէն վերջ, պատմական համադրութիւն մը, առաջին դարերէն մինչեւ մեր օրերը, երթալով աւելի յստակուած ու բացայայտուած՝ կու գայ ամբաստանելու վերափոխման հաւատքը: Յատկապէս կը յիշատակուին բիզանդական ծիսարանէն կարգ մը աղօթքներ. ապա անցնելով միջին դարու մեծ աստուածաբաններու հետքերէն՝ կը հասնի մեր օրերուն:

3. Տեսական մարզին մէջ միտնելով, Ն. Ս. կը հաւաստէ թէ անկարելի է մտա-

ծել բաժանում մը Քրիստոսի և Տիրամօր մէջ. այն որ Քրիստոսը յղացաւ, ծնաւ, կերակրեց, շօշափեց ու սրտին վրայ սեղմեց գորովով, այն Տիրամօրը՝ չէր կրնար իր երկրաւոր կեանքէն վերջ Քրիստոսէ բաժնուիլ, նոյնիսկ մարմնով. այդ մարմինը, զերծ ապականութենէ, պէտք էր փառաւորուիլ:

Արդարեւ Տիրամայրը, Ս. Հ. րեքու աւանդութեան համաձայն (Յ. դարէն ի վեր), իբրեւ Նոր Եւա, սերտօրէն միացած է Նոր Ադամին հետ՝ այն կռիւին ու յաղթանակին մէջ, որ Ծննդոց Գ. 15-ին մէջ կը նկարագրուի. պատերազմ ընդդէմ մեղքի և մահուան: Արդ, ինչպէս որ Քրիստոսի փառաւորեալ յարութիւնը էական մասը եղաւ այդ յաղթանակին, նմանապէս Ս. Կուսին համար ալ՝ կուսական ամբիժ մարմինն փառաւորութիւնը անհրաժեշտ էր. այդպէս միայն, այն է երկուքին ալ ամբողջական փառաւորութեամբ, կրնար վերջանալ այդ մէկ պատերազմը, զոր Յիսուս և Տիրամայրը միասին կատարեցին:

Ուրեմն ի սկզբանէ Տիրամայրը զուգուած է Յիսուսի հետ. և անոր նման զերծ մնալով գերեզմանի ապականութենէն, լիով յաղթած է մահուան, ինչպէս Յիսուս, և հոգւով ու մարմնով երկինքի գերագոյն փառքին հասած է, յետ աւարտելու իր երկրաւոր կեանքի շրջանը:

Այս է Տիրամօր հոգւոյն ու մարմնոյն երկնաւոր փառաւորութեան հրամանաւոր վարդապետութիւնը. այս կը հասկենանք «Վերափոխում» ըսելով:

ՄԵՐ ԳԱՆՁԱՐԱՆԸ

Արեւելեան եկեղեցիները, մանաւանդ մեր Հայկական աւանդութիւնը շատ ճիշտ են Վերափոխման ճառերով ու շարականներով:

«Բազմավէպ»-ի նախորդ թիւով բացուեցաւ շարքը ատոնց ուսումնասիրու-

թեան, ու պիտի շարունակուի յաջորդաբար. պատմական աղբիւրներու հարազատութեան հարցը հետաքրքրական է մեզի համար, որպէսզի հնարաւոր ըլլայ որոշ դաւանաբանական եզրակացութիւններու յանգելու:

Հարցը սակայն, ինչպէս կը թուի, դաւանական գետնի վրայ շատ պարզ է. մեր Հայ եկեղեցւոյ հաւատքը Վերափոխման մասին՝ նոյն է տիեզերական եկեղեցւոյ ձայնին հետ. մեր շարականները, հայրապետներու ճառերն ու ներբողեանները, Տիրամօր հոգւով ու մարմնով երկինք փոխուելուն նուագներն են:

Ս. Գրիգոր Նարեկացիի խօսքը, զոր իբրեւ բնաբան առինք մեր այս հակիրճ ներկայացումին, Վերափոխման խորհուրդին բոլոր աստուածաբանական տեսաբանութիւնը կուտ կերպով կը պարունակէ:

Սակայն առ այժմ կ'ակնկալենք մեր քննադատներու պատմական եզրակացութիւններուն, հետաքրքրութեամբ սպասելով զիստալ թէ այդ շարականները, ճառերը եւն... Երբ մտած են Հայ Եկեղեցւոյ մէջ, որոնց միջոցով:

Դաւանական տեսակէտով, թերեւս աւելի ուշ առիթն ունենանք անդրադառնալու:

Հոգեկան հրճուանքով կը կարծենք ու կը մաղթենք որ Վերափոխման այս դաւանանքը՝ ըլլայ միութեան կամուրջ մը արեւմտեան և բոլոր արեւելեան եկեղեցիներուն միջեւ, կամուրջ մը դաւանական սերտ միութեան, փոխադարձ հասկացողութեան, որ պիտի բանայ մարդկութեան առջեւ նոր դարաշրջան մը, բարօրութեան և ճշմարիտ երջանկութեան:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ



ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ԱՒԵՏԱՐԱՆ ՄԸ

ՍԻՐԻԱՅԻ Կաթողիկէ ոմն Գեորգ Մուսսալիէ երէկ ինձ բերաւ մագաղաթեայ Աւետարան մը ճշգրիտ համար անոր զրչուութեան թուականը և արժէքը, վասնզի, ըսաւ, ծախու պիտի առնեմ Հալէպցի մէկէ մը որ Ամերիկա կը մեկնի:

Աւետարանը գրուած է Սանահին վանքի մէջ ՊՂ. թուականին, այն է 890-ին և Քրիստոսի թուին 1441-ին: Մագաղաթեայ է, մանրանկարներով բաւական ճիշտ: Գրեթէ անթերի է բացի Յովհաննու Աւետարանի սկիզբէն, ուր երկու թուով կտրուած է հանդերձ Աւետարանչին նկարով:

Երկու յիշատակարան ունի, մին սկիզբը և միւսը վերջը: Վերջին յիշատակարանը զրչութեան ժամանակին է, սակայն սկիզբինը յետեալ դարու կը տեսնուի:

Առաջին յիշատակարանը կ'ըսէ:

Ես Տէր Պետրոս քոյի գլխաւորաբան ի հարաւ արդեանց իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց և կողակցին իմոց ի Կարիւն և որդւոց իմոց Ղուկասին, Հայկազին, Գրիգորին, Անտոնին և դատեալաց իմոց Սառային, Եղիսարեային, և հարսին իմոց Սիրայ խորունին, Մարիանին և քոռանց իմոց Պետրոսին, Մելքոնին, Քաւարին, Անտոնին և միւս այլ Պետրոսին, և դատեալաց իմոց Մարիանին, Խարունճանին, Յարութին, Սարգիսիւնի և այլ ամենայն յարեան մերձաւորաց իմոց կեկոյանեաց և հանգուցեաց: Ամէն: Այլ ոչ որ դաւիթիլն (?) ի ոչ իմոց և ոչ աւետարաց, երէ քանակայ շինի ազգի իմոց պարտեոյ զտուրք Աւետարան և երէ ոչ յիշատակարան իմոց մնացէ միկելո ի խորիկ ծերութիւն:

Աստուած ողորմի տէր Տէրունականին որ գրեաց զտուրք Աւետարան և ծախեաց մեզ ամէն: